

խնդրառութեան ձևեր եւ շարադասութեան մի կարգ, որ չկան արդէն:

Ի՞նչ կերպարանք ունէր մեր լեզուն Կորիւնից առաջ չգիտենք: Մեր լեզուի հնադարեան զարգացումը անյայտ ու մթին ժամանակներից հասած է որոշ աստիճանի եւ Մեսրոպեան զրի շնորհիւ դարձած է կայուն:

Տիեզերական ստեղծագործ ուժը սակայն՝ շարունակած է ազդել. եւ կենդանի լեզուն, սերունդների բերանում դառնալով շարունակ՝ ստացած է այսօրուան կերպարանքը:

Ներդոյականը հիմա դրականով չի կազմում, այլ ուղղականի ձեւն ունի. մենք չենք ասում «յայնմ ժամանակի», այլ «այն ժամանակ»: Յատկացուցիչը հիմա յատկացեալից առաջ ենք դնում եւ ասում ենք «հայոց աշխարհը» եւ ոչ «աշխարհն հայոց». «ուրեմն» մեզ համար պատճառական մակրայ է միայն եւ ոչ տեղական. «դաս» բառի գործիականը հիմա «դասով» է եւ ոչ թէ «դասու» եւ միայն Ղաւրբաղցին է, որ շարունակում է գործիականը առով կազմել ասելով՝ տնաւ, տեղաւ, մենք ասում ենք «աւետարանով» եւ ոչ «աւետարանաւ». նախդրի տրական «ի ձեռն» հիմա դարձած է «ձեռքով» (գործիական) եւ բառերը ԵՅ հոլովում չունին. այլևս չենք ասում «հաւասարելոց», այլ «հաւասարածների». «գտան»ը որ հին մարդու համար կրաւորական է եւ նըշանակում է «գտնուեցան», մեզ համար հիմա ներգործական է, իսկ նրանց ներգործականը «գտին» մեզ համար չբացած է առյաւէտ: Թըուականը հիմա չի համաձայնում գոյականի հետ ոչ թուով, ոչ հոլովով եւ չենք ասում «երկուց հաւասարելոց», այլ «երկու հաւասարուածների»: Շատ բառեր նոյն էն մնացել, բայց փոխել են իրենց իմաստը: «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ» ասում է Առաքեալը (Բ. Կորնթ. Գ. 6): Շեղելով այս խորին իմաստը իր բուն առիթից՝ կարող ենք գործ ածել մեր քննած երեւոյթը որակելու համար եւ ասել. դիրն սպանել է դասական մտածութեան ձեւը, բայց եւ պահել է անկորուստ. իսկ ոգին կեցուցանելով՝ փոփոխել է մեր դասական լեզուն եւ նրան տուել մի նոր կերպարանք:

Եթէ Կորիւնի հատուածը քննեք մի ուրիշ տեսակէտից՝ կը տեսնենք, որ «ժամանակի» եւ

«Բրիտոսի» մեզ համար նոյնպէս սեռ. տրական են, ինչպէս Կորիւնի համար. բայց մենք չենք պահում «հայ» բառի յոգ. ուղղականը «հայք», թէեւ գործ ենք ածում յոգ. սեռականը «հայոց»: Մեզ համար «գնդով» գործիական է, ինչպէս Ե. դարի մարդու համար, բայց «հայ» եւ «գունդ» բառերը սեռականը կազմում են ի հոլովելով — հայի, գնդի. մենք պահել ենք «լինէր» ձեւը, բայց Կորիւնի համար նա անց. անկատար ժամանակ է. (լինում էր, կ'ըլլար), իսկ մեզ համար ստորադասական է. (թող լինէր, ըլլար): Ուրեմն կան ձեւեր, որ մնացած են անփոփոխ, բայց փոխած են իրենց իմաստը. կան ձեւեր, որ աւելի տարածուած են (սեռ. ի), քան հին ժամանակ, կան ձեւեր, որ մեռած են կամ դաւառական են միայն (գործիական աւ):

Կարելի է առաջուց ասել, որ գրի առնուած ամէն լեզուի մէջ մենք անխուսափօրէն հանդիպելու ենք երեք կարգի երեւոյթներ.

1) Լեզուական ձեւեր, որ տիրական են լեզուն գրի առած ժամանակ (օրինակ, նախդիրով բացառականը):

2) Ձեւեր, որ յաղթահարուած մնացորդն են երբեմն տիրական ձեւերի (օրինակ, ցոյլ յոգ. սեռականները մեզ համար. հայոց, տեղեաց եւ այլն):

3) Ձեւեր, որ նոր են ծիլ արձակած եւ տիրաբար պէտք է իշխեն մի քանի դար յետոյ (օրինակ՝ եր եւ ներ ածանցները, որ յոգնակի են կազմում եւ շատ սակաւ են պատահում Ե. դարում, մինչդեռ այսօր իշխում են տիրաբար):

Ինչպէս տեսնում էք, լեզուն փոխում է շարունակ եւ իր տարերքը — հնչիւն, բառ, ձեւ թէ կարգ — փոփոխում են անհաւասար արագութեամբ ու չափով: Բոլոր բարբառներն ասում են «Հայր մեր», բայց ոչ մէկը չի ասում «հայրս տուն եկաւ», այլ կամ հէրս կամ հարս տուն եկաւ:

Ահա մի բառ, որ որոշ կապակցութեան մէջ մնում է անփոփոխ, իսկ ընթացիկ խօսքի մէջ ձեւափոխուած է սաստիկ: Ու թէեւ կարող ենք օրէնք բանաձեւել թէ այլ-ը դառնում է կամ է կամ ա, բայց մենք տեսնում ենք, որ միև-